

Իրինե Գեղևանիշվիլի, Մզիա Շերեթելի, Մարիամ Շուրդախա

Թբիլիսիի Իվանե Զավախիշվիլու անվան պետական համալսարան

ԻՆՏԵՐՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՒՄԸ ՎՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵԶ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հետազոտման նպատակն էր պարզել, թե որքանով է աշխատում ինտերմշակութային զգայունության Չենի և Ստարոստայի գործիքը վրացական միջավայրում և մասնավորապես վրացի ուսանողների ընտրության հարցում: Հետազոտմանը մասնակցում էր ազգությամբ վրացի 255 ուսանող (148 աղջիկ և 107 տղա), որոնց միջին տարիքն էր 20-23 տարեկանը: Որպես հետազոտման գործիք օգտագործված էր Չենի և Ստարոստայի 24 դրոյթանոց հարցարանը: Ստացված տվյալները մշակվել են գործոնային վերլուծության մեթոդով: Ի տարբերություն ամերիկացի և գերմանացի ուսանողների շրջանում անցկացված հետազոտության, վրացի ուսանողների մոտ առանձնացվեց ինտերմշակութային զգայունության 8 գործոն, որը բացատրում է տվյալների վարիաբեկության 58,94%-ը: Հետազոտությունը բացահայտեց, որ Չենի և Ստարոստայի ինտերմշակութային զգայունության չափման հարցարանը վրացական մշակույթում այլ կերպ է գործում, չնայած բացահայտվեցին ինտերմշակութային զգայունության նման գործոններ, ինչպիսիք են՝ ինտերակցիայի հաճույքը, ինքնավստահությունը, ուշադրությունը և մշակութային տարբերությունների հարգանքը, սակայն վրացական մշակույթում այս չափումներին ավելացան ինտերակցիայի զգայունությունը, զգուշությունը, այլ մշակույթներ ընդունել-հերքելը և դրանց հետ հավասարության գործոնները ևս:

Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների հասարակական ինտեգրման համար անչափ կարևոր է ոչ միայն նրանց պետական լեզուն սովորեցնելը, այլև նրանց ավանդույթների, արժեքների, կենսակերպի և այլն, ուսումնասիրումը, նրանց նկատմամբ հասարակության դոմինանտ մասի հոգեբանական ընդունման զարգացումը և այս տեսակետից քաղաքացիական գիտակցության

մակարդակում երկրի էթնիկական բազմերանգության գիտակցումը:

Ժամանակակից գիտության մեջ առանձնացնում են անհատների և հասարակության այնպիսի հոգեբանական հատկանիշ, ինչպիսին ինտերմշակութային գիտակցությունն է, որը տարբեր մշակույթների փոխադարձ ընդունման և խաղաղ համագոյակցության հոգեբանական հիմք է ստեղծում (Կուլչեր, Մակգելանդ, 2006, Տաբատաձե, Նացվիշվիլի, 2008,

Ծերեթելի, 2011): Վրաստանում առկա սոցիալ-քաղաքական իրավիճակի նախատեսմամբ, անչափ կարևոր է գնահատել հասարակության ինտերմշակութային գիտակցության և, մասնավորապես ինտերմշակութային զգայունության (սենսիտիվության) մակարդակը:

Ինտերմշակութային գիտակցությունը, այնպես ինչպես ինտերմշակութային զգայունությունը, քննարկվում է ինտերմշակութային հաղորդակցության իրազեկության համատեքստում: Հետազոտողների մի մասը ինտերմշակութային հաղորդակցության իրազեկությունը քննարկում է որպես անհատի կարողություն զարգացնել դրական վերաբերմունք օտար մշակույթի նկատմամբ և առանձնացնում նրա ճանաչողական, հուզական և վարքային չափումները: Համապատասխանաբար, նրանց նպատակն է այնպիսի կառուցվածքի ստեղծումը, որը հիմնված կլինի անհատի անհատական հատկանիշների վրա, և որը պայմանավորում է հաջող ինտերմշակութային վարք (ինտերմշակութային հարմարվողականություն, համապատասխանություն, ինտերակցիայի արդյունավետություն և այլն): Այլ հետազոտողների կարծիքով, արդյունավետ ինտերմշակութային հաղորդակցության էական մասը կազմում է վարքային բաղադրամասը և այսպիսով նշանակալի է հենց այս բաղադրամասի մեջ մտնող հատուկ կարողությունների զարգացումը: Որոշ հետազոտություններում բացահայտվել է նաև ինտերակցիայի համատեքստի և ոչ բառային հաղորդակցության կարևորությունը (Կուլներ, Մակգլեյլանդ, Մաֆորդ, 2006, Ռենբեկ, Յուրդակուլ, Յերիտ, 2009, Ֆրից, Մյուլենբերգ, Չեն, 2000):

Այս ուղղությամբ ստեղծված հայեցակարգային մոդելներից առանձնապես ուշագրավ է Չենի և Ստարոստայի (Չեն,

1997; Չեն, Ստարոստա 2000) կողմից ձևավորված մոդելը ինտերմշակութային հաղորդակցության իրազեկության մասին: Նրանք միավորեցին վերոհիշատակյալ մոտեցումները և ձևավորեցին մոդել, որը բաղկացած է ինտերմշակութային իրազեկության երեք հայեցակարգային չափումներից: Դրանք են ինտերմշակութային գիտակցությունը, ինտերմշակութային զգայունությունը և ինտերմշակութային հնարամտությունը:

Ինտերմշակութային գիտելիքը

Ինտերմշակութային իրազեկության ճանաչողական չափում է, որը ենթադրում է մարդու կարողություն հասկանալ այլ մշակույթի նմանությունները և տարբերությունները: Այս չափումն ընդգրկում է երկու բաղադրամաս՝ սեփական անձի գիտակցումը և մշակութային գիտակցությունը: **Ինտերմշակութային զգայունությունը** ինտերմշակութային հաղորդակցության իրազեկության հուզական չափում է և ենթադրում է մարդու հուզական ցանկությունը ծանոթանալ, գնահատել և ընդունել մշակութային տարբերությունները: Այս չափումն ընդգրկում է վեց բաղադրամաս՝ սեփական անձի գնահատում, սեփական անձի մոնիտորինգ, հուզարտահայտչականություն, շփվող լինելը, ուրիշին չդատապարտելը և սոցիալական ակսացիա: **Ինտերմշակութային հնարամտությունը** ինտերմշակութային հաղորդակցության իրազեկվածության վարքային չափում է, որը ենթադրում է անհատի կարողությունը հասնել հաղորդակցության այլ մշակույթի ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ: Այս չափումն ընդգրկում է չորս բաղադրամաս՝ տեղեկատվական կարողություններ, սեփական անձի համապատասխան դրսևորում, վարքային ճկունություն և ինտերակցիայի կառավարում:

Հիմնվելով այս հայեցակարգային մոդելի վրա՝ Չենը և Ստարոստան (Չեն, Ստարոստա, 2000) ստեղծեցին ինտերմշակութային զգայունության հասկացության չափման գործիք: Նրանց կողմից հատուկ կազմված հարցարանն ընդգրկում է 24 դրույթ և չափում է ինտերմշակութային զգայունությունը: Ամերիկյան ուսանողների շրջանում անցկացված հետազոտման մեջ բացահայտվեց 5 հիմնական գործոն, որը բացատրում է վարիաբեության 37.3%-ը: Գործիքի վստահելիությունը գնահատվեց այլ վստահելի գործիքների հետ համեմատության ճանապարհով: Նույն գործոնները բացահայտվեցին գերմանացի ուսանողների նկատմամբ Ֆրիցի, Մյուլենբերգի և Չենի (Ֆրից, Մյուլենբերգ և Չեն, 2000) կողմից անցկացված հետազոտման մեջ: Անցկացված հետազոտությունների հիման վրա որոշվեց, որ Չենի և Ստարոստայի մոդելը և համապատասխան հետազոտման գործիքն աշխատում է տարբեր մշակութային միջավայրերում: Սողելի համաձայն առանձնացվեց ինտերմշակութային զգայունության 5 հիմնական գործոն (բաղադրամաս) և նրա համապատասխան դրույթներ: Սրանք են.

1. Ընդգրկվածություն ինտերակցիային (Interaction Engagement) – դրույթներ՝ 1, 11, 13, 21, 22, 23, 24:
2. Մշակութային տարբերությունների հարգանք (Respect for Cultural Differences) – դրույթներ՝ 2, 7, 8, 16, 18, 20:
3. Ինտերակցիայի ինքնավստահություն (Interaction Confidence) – դրույթներ՝ 3, 4, 5, 6, 10:
4. Ինտերակցիայի հաճույք (Interaction Enjoyment) – դրույթներ՝ 9, 12, 15:
5. Ինտերակցիայում ուշադրություն (Interaction Attentiveness) – դրույթներ՝ 14, 17, 19:

Հետազոտման նպատակը

Մեր հետազոտման նպատակն էր պարզել, թե որքանով է աշխատում ինտերմշակութային զգայունության Չենի և Ստարոստայի գործիքը վրացական միջավայրում և մասնավորապես, վրացի ուսանողների ընտրության հարցում:

Մեթոդը և մասնակիցները

Չենի և Ստարոստայի 24 դրույթանոց հարցարանը թարգմանվել է վրացերեն երկակի թարգմանության սկզբունքով: Հարցարանով հարցվել են Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի և Վրաստանի պոլիտեխնիկ համալսարանի ուսանողներ: Հարցմանն ընդամենը մասնակցել է 269 ուսանող: Լրացուցիչ գործոնների բացառման համար վերջնական հետազոտման մեջ վերլուծվել են ազգությամբ վրացի 255 ուսանողի տվյալներ, որոնցից 148-ն աղջիկ էր և 107-ը՝ տղա: Ընտրված խմբի միջին տարիքն էր 20-22 տարեկանը:

Ընթացակարգերը և տվյալների վերլուծությունը

Մինչև հարցարանի տվյալների ամփոփումը, անդրադարձանք հետևյալ դրույթներին՝ 2, 4, 7, 9, 12, 15, 18, 20, 22:

Տվյալները մշակվեցին SPSS վիճակագրական ծրագրի փաթեթով: Կիրառվեց գործոնային վերլուծության մեթոդը:

Հետազոտման մեջ տվյալների վերլուծության հետևանքով առանձնացվեց 8 գործոն, որոնք բացատրում են տվյալների վարիաբեության 58,94%-ը:

Դրույթներ	Բաղադրամասեր							
	1	2	3	4	5	6	7	8
q22	.700							
q15	.637							
q18	.586							
q9	.570							
q12	.561					.448		
q10		.673						
q3		.673						
q20		-.574						
q4		.506						
q7			.738					
q1			.719					
q13								
q16				.730				
q8				.636				
q23				.615				
q6					.761			
q2					-.558			
q5		.486			.525			
q19						.794		
q24						.504		
q17							.721	
q14							.701	
q11								.796
q21								.466
Գործոնների առանձնացման մեթոդը՝ սկզբունքային բաղադրամասերի վերլուծություն: Պոտոման մեթոդը՝ Վարիմաքս, Կայգերի չափանշով:								

Ինչպես երևում է աղյուսակից, գործոնների վրա (բաղադրամասերի վրա), գործիքի դրույթները բեռնվեցին ութ որոնց փորձագետ-հոգեբանների

մասնակցությամբ պայմանականորեն անուններ տրվեցին: Գործոնները, համապատասխան դրույթներով տրված են ստորև.

Առաջին գործոն՝ ինտերակցիայի հաճելիություն-տհաճություն (ԵՆԵՍԵ քաղաքում է տվյալների վարիաբեության 15.5%-ը).

- ✓ Դ.22. խուսափում եմ իրավիճակներից, որտեղ պետք է շփվեմ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ (0.700):
- ✓ Դ.15. Ինձ անհրաժեշտ չեմ համարում այլ մշակույթների ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ (0.637):
- ✓ Դ.18. Չեի ընդունի այլ մշակույթի ներկայացուցիչ տեսակետը (0.586):
- ✓ Դ.9. Հեշտությամբ կորցնում եմ հավասարակշռությունս այլ մշակույթի ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ (0.570):
- ✓ Դ.12. Հաճախ շփոթվում եմ, երբ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ եմ (0.561):

Երկրորդ գործոն՝ ինտերակցիայի ինքնավստահություն (քաղաքում է տվյալների վարիաբեության 10.4%-ը):

- ✓ Դ.10. Ինքս իմ մեջ համոզված եմ՝ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ շփման ժամանակ (0.673):
- ✓ Դ.3. Ինքնավստահ եմ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ (0.673):
- ✓ Դ.20. Մտածում եմ, որ իմ մշակույթն ավելի լավ է, քան այլ մշակույթներ (-0.574):
- ✓ Դ.4. Ինձ համար դժվար է այլ մշակույթի ներկայացուցիչների առջև խոսելը (0.506):
- ✓ Դ.5. Միշտ գիտեմ, թե ինչ պետք է ասեմ այլ մշակույթի

ներկայացուցիչների հետ խոսելիս (0.486):

Երրորդ գործոն՝ այլ մշակույթների հերքում-ընդունում (քաղաքում է ԵՆԵՍԵ տվյալների վարիաբեության 8.6%-ը):

- ✓ Դ.7. Չեմ հավանում այլ մշակույթի ներկայացուցիչների հետ լինելը (0.738).
- ✓ Դ.1. Բավականություն եմ ստանում այլ մշակույթի ներկայացուցիչների հետ շփվելուց (0.719):

Չորրորդ գործոն՝ մշակութային տարբերությունների հարգանք (քաղաքում է տվյալների վարիաբեության 6.3%-ը):

- ✓ Դ.16. Հարգում եմ այլ մշակույթի ներկայացուցիչների վարքը (0.730).
- ✓ Դ.8. Հարգում եմ այլ մշակույթի ներկայացուցիչների արժեքները (0.636):
- ✓ Դ.23. Հաճախ ցույց եմ տալիս այլ մշակույթի ներկայացուցիչին, որ հասկացա նրա բառային և ոչ բառային ռեպլիկաները (0.615):

Հինգերորդ գործոն՝ այլ մշակույթների հետ հավասարություն (քաղաքում է տվյալների վարիաբեության 5.3%-ը):

- ✓ Դ.6. Մյլ մշակույթի ներկայացուցիչների հետ կարող եմ այնպիսի հաղորդակցվող լինել, ինչպես ցանկանում եմ (0.761):
- ✓ Դ.2. Կարծում եմ այլ մշակույթի ներկայացուցիչ ժողովուրդը մտավոր սահմանափակ է (-0.558):
- ✓ Դ.5. Միշտ գիտեմ, թե ինչ պետք է ասեմ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ խոսելիս (0.525):

Վեցերորդ գործոն՝ ինտերակցիայի զգայունություն (քաղաքում է տվյալների վարիաբեության 4.3%-ը).

- ✓ Դ.19. Մյլ մշակույթի ներկայացուցիչների հետ շփվելիս

հեշտ է ճանաչում գրույցի ենթատեքստը (0.794):

- ✓ Դ.24. Հաճելի են տարբերությունները իմ և այլ մշակույթի ներկայացուցիչների միջև (0.504):
- ✓ Դ.12. Հաճախ շփոթվում եմ, երբ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ եմ (0.448):

Յոթերորդ գործոն՝ ուշադիր լինելը ինտերակցիայի ժամանակ (բացատրում է տվյալների վարիաբեության 4.3%-ը):

- ✓ Դ.17. Աշխատում եմ որքան հնարավոր է շատ տեղեկություններ ձեռք բերել այլ մշակույթի ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ (0.721):
- ✓ Դ.14. Շատ ուշադիր եմ այլ մշակույթի ներկայացուցիչների հետ հարաբերության ժամանակ (0.701):

Ութերորդ գործոն՝ զգուշություն ինտերակցիայի ժամանակ (բացատրում է տվյալների վարիաբեության 4.1%-ը).

- ✓ Դ.11. Չեմ շտապում ձևավորել իմ տեսակետը այլ մշակույթի ներկայացուցչի մասին (0.796).
- ✓ Դ.21. Զրույցի ժամանակ հաճախ եմ համաձայնում այլ մշակույթի ներկայացուցչի հետ (0.466):

Այսպիսով, վրացի ուսանողների շրջանում մեր կողմից անցկացված հետազոտման արդյունքում գործիքի դրույթները տարբեր կերպ բաշխվեցին և բացահայտվեց ինտերակցիային զգայունության ութ գործոն, Չենի և Ստարոստայի կողմից սահմանված հինգ գործոնի փոխարեն: Ստորև տրված աղյուսակում ներկայացված են այս երկու հետազոտություններում բացահայտված գործոնները:

	Չենի և Ստարոստայի կողմից սահմանված գործոնները	Մեր կողմից բացահայտված գործոնները
1.	Մշակութային տարբերությունների հարգանք	Մշակութային տարբերությունների հարգանք
2.	Ինտերակցիայի ինքնավստահություն	Ինտերակցիայի ինքնավստահություն
3.	Ինտերակցիայի բավականություն	Ինտերակցիայի բավականություն
4.	Ինտերակցիայի ժամանակ ուշադիր լինելը	Ինտերակցիայի ժամանակ ուշադիր լինելը
5.	<i>Ընդգրկվածություն ինտերակցիայի մեջ</i>	<i>Այլ մշակույթների հերքում-ընդունում</i>
6.		<i>Զգուշություն ինտերակցիայի ժամանակ</i>
7.		<i>Ինտերակցիայի ժամանակ սենսիտիվություն</i>
8.		<i>Այլ մշակույթների հետ հավասարություն</i>

Եզրակացություններ և վերլուծում

Այսպիսով, հետազոտությունը բացահայտեց, որ Չենի և Ստարոստայի ինտերակցիային զգայունության չափման հարցարանը այլ կերպ է գործում վրացական մշակույթում և այսպիսով, այն «մշակույթից ազատ» վստահելի գործիք չէ: Թեպետ, պետք

է նշել նաև այն, որ երկու հետազոտություններում էլ բացահայտվել են ինտերակցիային զգայունության միևնույն գործոնները, ինչպիսիք են ինտերակցիայի բավականությունը, ինքնավստահությունը, ուշադիր լինելը և մշակութային տարբերությունների հարգանքը, սակայն

վրացական մշակույթում այս չափումներին ավելացել են զգայունությունն ինտերակցիայի ժամանակ, զգուշությունը, այլ մշակույթներն ընդունել-հերքելը և նաև նրանց հետ հավասարության գործոնները: Ուշագրավ է նաև այն, որ հետազոտությունը բացահայտել է անչափ հետաքրքիր գործոններ, որոնք, ինչպես պարզվում է, մատնանշում են ինտերմշակութային զգայունության սպեցիֆիկ չափումները: Պարզ է, որ վրացական մշակույթին բնորոշ վստահելի ինտերմշակութային զգայունության հասկացության կառուցման

համար այս հետազոտման մեջ ստացած տվյալները բավական չեն, թեպետ արդյունքները բացահայտ ցույց են տալիս այս ուղղությամբ լրացուցիչ հետազոտությունների անցկացման անհրաժեշտությունը: Կարևոր է նաև այս գործընթացի մեջ նախատեսել Վրաստանում առկա բազմամշակույթ և բազմադավանանք բազմերանգության ասպեկտը և նրա հետ կապված սոցիալ-հոգեբանական համատեքստը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Կուշներ, Մակգլելանդ, Սաֆորդ - Kenneth Cushner, Averil McClelland, Philip Safford (2006). *Intercultural Competence: Human Diversity in Education, An Integrative approach*, McGraw-Hill, 2006 , p. 133-147.
- Ռենբեկ, Յուրդակուլ, Յերիս, - Sebnem Penbek, Dicle Yurdakul, A. Guldem Cerit (2009). *Intercultural Communication Competence: A Study about The Intercultural Sensitivity of University Students Based on their Education and International Experiences, European and Mediterranean Conference on Information Systems 2009 (EMCIS2009) July 13-14 2009, Izmir.*
- Տաբատաձե, Նազվիշվիլի - Տաբատաձե Շ., Նազվիշվիլի Ն. (2008). *Ինտերմշակութային կրթություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն, Թբ., 2008*
- Ֆրից, Մյուլենբերգ, Չեն - Wolfgang Fritz, Antje Möllenberg, Guo-Ming Chen (2000), *Measuring Intercultural Sensitivity in Different Cultural Context, Technische Universität Braunschweig, AP-Nr. 00/11, Braunschweig 2000.*
- Չեն - Guo-Ming Chen (1997). *A Review of the concept of Intercultural Sensitivity, EDRS, paper presented at the biennial convention of Pacific and Asian Communication Assosiation, january, 1997, Honolulu, Hawaii, p.1-14.*
- Չեն, Ստարոստա - Guo-Ming Chen, William J. Starosta (2000). *The Development and Validation of the Intercultural Sensitivity Scale, EDRS, paper presented at the Annual Meeting of the National Communication Assosiation, WA, november 8-10, 2000, p. 1-22.*
- Ծերեթելի - Մզիա Ծերեթելի, *Ինտերմշակութային կրթությունը, որպես բազմազգ հասարակության անվտանգության ապահովման մի մեխանիզմ, «Սոցիալական անվտանգության էթնիկական ասպեկտները բազմաէթնիկ հասարակության մեջ» ժողովածուի մեջ, հրատարակչ. «Մծիգնորարի», 2011, էջ 273-300:*

Irine Gedevanishvili, Mzia Tsereteli, Mariam Shurghaia
I. Javakhishvili Tbilisi State University

MEASUREMENT OF INTERCULTURAL SENSITIVITY OF GEORGIAN STUDENTS

ABSTRACT

The goal of the research was to find out whether the Chen and Starosta instrument of intercultural sensitivity works in Georgian society, particularly in the selection of Georgian students. 255 students (148 females and 107 males) of Georgian nationality took part in the research. Their average age was 20.23 years. The instrument of the research was Chen's and Starosta's scale with 24 items. The received results were processed by the method of factor analysis. Unlike the research done on German and American students, the one done on Georgian students resulted in definition of eight factors of intercultural sensitivity, that explain 58.94% of data variability. The research showed that Chen's and Starosta's intercultural sensitivity measuring scale works differently in Georgian culture. Although mutual factors (interaction enjoyment, confidence, interaction attentiveness and respect for cultural differences) were defined, in Georgian culture, other factors, such as interaction sensitivity, carefulness, acceptance-rejection of other cultures and equality with them were added.